

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքստուրլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊԶԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	Տեքստուրլդ ՍՊԸ	Տեքստուրլդ ՍՊԸ	<p>Բաճկոն՝ ձմեռային, ամենօրյա շտաբային Բաճկոնը արտադրվում է մուգ կանաչավուն երանգի «Ռիպստոպ» տեսակի ոչ պակաս քան 235 գրամ մակերեսային խտությամբ, ոչ պակաս քան 44% բուրդ, ոչ ավել քան 54% պոլիէսթեր և ոչ ավել քան 2% լայկրա բաղադրությամբ գործվածքից: Գույնի կայունությունը լվացման, չոր շփման և քրտնքի նկատմամբ նվազագույնը 4 բալ: Բաճկոնը՝ հետծավող օձիքով է, թևքերին և աջ ու ձախ կրծքամասին ինքնակաջուկներով ամրացված է ասեղնագործ տարբերանշաններ:</p> <p>Բաճկոնի առաջամասը և թիկունքամասը մշակված է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզոկարված է անջրաթափանց շերտով, իսկ թևքերը՝ 120 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնե տաք ներդիրով, որը մզոկարված է անջրաթափանց շերտով:</p> <p>Աստառը՝ ԳՕՍՏ-20272-2014 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք մուգ կանաչավուն գույնի գործվածքից, ընդ որում աստառի բաղադրությունը՝ 100 % վիսկոզա: Թիկունքը վերին կտրվածքով, կոկետկայով, կոկետկայի եզրից ներքև՝ երկայնական կտրվածքով կարող է մշակվել ոչ ավել քան,</p>

երեք կտորով: Բաճկոնի փեշերի ներքին եզրերը մշակված են 1.7-2.0 սմ լայնության զարդակարով: Բաճկոնը ներքևի եզրից մինչև օձիքի վերին եզրը կոճկվում է պաշտպանական կանաչ՝ համապատասխան գույնի, կենտրոնական շղթայով (գլխիկները ամուր, դիմացկուն A դասի, տրակտոր տեսակի № 5 կամ № 6), որի վրայից, մշակված է երկկողմանի 5,0-5,5 սմ լայնության ամրացնող շերտով կափույրը, որը ներսամասից՝ կոճկվում է 5 հատ մետաղական կոճգամներով (12մմ-14մմ տրամագծով, YIK կամ YKK): Կափույրը զարդակարված է զույգ կարով: Կողային թեք գրպանների վերին եզրից դեպի վերև 1.0-2.5 սմ հեռավորության վրա մշակվում է փակ տեսակի կարգավորվող սև կամ պաշտպանական գույնի էլաստիկ քուղ՝ պլաստմասե կարգավորիչներով: Կրծքամասի աջ և ձախ մասերում մշակված են կափույրներով, վրադիր ծավալուն՝ կախված չափսերից 15-16 սմ լայնության և 16-17 սմ երկարության մեկական գրպաններ, որոնց 3.8-4.2 սմ լայնության կափույրները կրծքամասի երկարությամբ ամբողջական են, կողքերից փակ, կոճկվում են 2.5×2.5 սմ չափսի կանաչ երանգի կպչուն ժապավեններով: Փեշերի ձախ և աջ մասերում մշակված են վերին մասերը դեպի ներս թեքված ներկարված, 18.0-18.5 սմ բացվածքով՝ 1.5-2.0 սմ լայնությամբ շերտիկով գրպաններ, որոնք կոճկվում են կանաչ երանգի գույնի պլաստմասե կայծակ շղթայով: Բաճկոնի ներսից՝ ձախ կրծքամասի հատվածում, մշակված է կոճակով կոճկվող ծոցագրպան: Կրծքամասի աջ և ձախ գրպանների կափույրների վրա՝ գրպանների լայնությանը համաչափ, մշակվում է 2.5×12.5 սմ չափսերի կպչուն ժապավեններ կրծքանշանների փակցման համար: Ուսադիրների շրջանում մշակվում են երեք փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Թևքերի դաստակային մասերը մշակված են զույգ կոճակներով և չափսը կարգավորող, 4սմ լայնքով, 8-10սմ երկարությամբ ժապավեններով, վրան կոճակի օղակներով: Թևքերի ներքին եզրերը մշակված են 4.8-5.2 սմ լայնությամբ մանժետով, մանժետի հետևամասը մշակված է գաղտնի էլաստիկ ժապավենով: Թևքերի վրա ուսակարից 8.5-9.0 սմ ներքև մշակված

են 19-20 սմ երկարության և 13-13.5 սմ լայնության վրադիր երկայնակի գրպաններ, որոնք կոճկվում են դեպի կենտրոնական շղթա ներկարված կանաչ երանգի պլաստմասե գաղտնի կայծակ շղթայով: Կրծքանշաններ՝ ՀՀ ԱԱԾ, ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՉՈՐՔԵՐ և արյան կարգի գրվածքներով (ըստ Պատվիրատույի պահանջի): Ձախ և աջ թևքերի վրա մշակվում է սեպածև տեսքով 7.0×9.0 սմ չափսի, կանաչ գույնի կաչուկ ժապավեններ, որոնց ամրանում են ասեղնագործ խորհրդանշանները՝ ՀՀ ԱԱԾ թևքանշանները: Ասեղնագործ ինքնակաչուկներով գրվածքների, ՀՀ ԱԱԾ տարբերանշանների նմուշները , ըստ քանակների կտրամադրվեն ՊՍ-ի կողմից, Կատրոդի կողմից ներկայացվող 3 հատ տարբեր չափսերի և հասակների նմուշների հաստատումից հետո՝ հինգօրյա ժամկետում: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը, պարտավոր է իր ֆինանսական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված արտոնագրված կամ անհրաժեշտության դեպքում Էտալոնային փոր-ձագիտական լաբորատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության, սիտեպոնի և աստառի մակերեսային խտության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացությունը: Ընդ որում նմուշառումը պետք է կատարվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան մասնագետի մասնակցությամբ: Պիտակավորումն ու փաթեթավորումը: Բաճկոնի ձախակողմյան փեշի ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, ներսի կողակարին կամ ծոցագրպանին պետք է կարված լինի պիտակ (կամ պիտակներ): Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը, լվացքի և խնամքի վերաբերյալ տեղեկատվություն: Բաճկոնի վերին կոճակից կամ շղթայից պետք է կախված լինի չափս-հասակային ստուգիչ պիտակ, վրան նշված՝ տեսականու անվանումը, չափսը, արտադրող և/կամ մատակարար

			<p>կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը,:</p> <p>Փաթեթավորումը առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 5 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ 1 հատ: Կրծքանշանները առանձին- առանձին փաթեթավորված:</p> <p>Արկղերը պիտակավորված կամ տպագրված 10սմ*15սմ չափսի պիտակներով, որոնց վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը:</p>
--	--	--	---

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԲԱՃԱՊՁԲ-24/4-ՀԱՆԴԵՐՁԱԼՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
2			